

## ԿԱՐԾԻՔ

Կարինե Արտուշի Մոսիկյանի «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա» թեկնածուական ատենախոսության մասին

Ատենախոսությունը բաղկացած է Երկու գլխից. Ա գլխում վերհանվում են Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական, մասնավորաբար մարդաբանական հայացքները: Ա գլխի Ա ենթաբաժնում ներկայացվում է Նեմեսիոսի «Մարդու բնության մասին» երկը, արժեվորվում են բնափիլիսոփայական հայացքները, վերլուծվում մարդու բնության, կարգավիճակի և տեսակային հատկությունների վերաբերյալ նրա մտածումները, մասնավոր կարևորությամբ լուսաբանվում են հոգու մասին նրա ուսմունքը, իմացաբանական ընկալումները: Բ գլխում հետազոտվում ու գնահատվում է այն տեղն ու դերը, որ «Մարդու բնության մասին» երկասիրությունը զբաղեցրել է հայ միջնադարի տեսական-փիլիսոփայական մտածողության մեջ: Գլխի ենթաբաժիններում խոսվում է Նեմեսիոսի երկի հայերեն թարգմանության մասին, տրվում է այդ աշխատության հայերեն թարգմանության մեջ կենցաղավարող տեսական-փիլիսոփայական եզրերի վերլուծությունը: Եզրակացության մեջ իմի են բերված ատենախոսության հիմնական արդյունքները: Իր առջև դրված խնդիրները լուծելու նպատակով Կ. Մոսիկյանը ծրագրում և հաջողությամբ կյանքի է կոչում ատենախոսության հանգուցային կարևորության հետևյալ պահերը. Խոսել Նեմեսիոսի երկի բովանդակության և կառուցվածքի մասին, վերհանել Նեմեսիոսի բնափիլիսոփայական և մարդաբանական հայացքները, մատնացուցել նրա կապը անտիկ փիլիսոփայության, Աստվածաշնչի և վաղքրիստոնեական ավանդույթի հետ, հայտորոշել Նեմեսիոսի բերած նպաստը առհասարակ միջնադարյան փիլիսոփայության և մասնավորապես հայ միջնադարի փիլիսոփայության զարգացման մեջ, անդրադառնալ Բնության գրքի հայերեն թարգմանության ժամանակի, տարաբնույթ պարագաներին և բառազանձին, քննել երկի միջնադարյան հայերեն մեկնությունները, նշմարել և արձանագրել Նեմեսիոսի երկի ներկայությունը հայ մատենագիրների ժառանգության մեջ:

Հենվելով պատմափիլիսոփայական, հայրախոսական նորագույն հետազոտությունների վրա՝ ատենախոսը համակողմանի ընդգրկումով, պատշաճ խորությամբ ներկայացնում է Նեմեսիոսի խնդրո առարկա աշխատությունը, լուսաբանում նրա բնափիլիսոփայական հայացքները՝ դրանք դիտելով Ուշ անտիկ, Վաղքրիստոնեական մշակույթի հետ սերտ հարաբերակցության պայմաններում: Փաստական նյութը ատենախոսին թույլ է տալիս այն համեմատել նույնաբնույթ իրողությունների հետ, և ըստ այդմ տվյալ իրողությունները զետեղել մշակութային նույն հարթության վրա: Այժմ առջև ունենալով համաեվրոպական հեղինակություն վայելող

ուսումնասիրողների կարծիքները՝ Մոսիկյանն, այդուամենայնիվ, անվերապահորեն չի որդեգրում դրանք, այլ ցուցաբերում որոշակիորեն ինքնուրույն մտտեցում: Այսպես, նա վիճարկում է այն կարծիքը, թե Նեմեսիոսն էկլեկտիկ փիլիսոփա է: Նա ոչ թե կցկցում է մեկմեկու օտար տեսակետներ, «այլ ավելի շուտ իմի է բերում գոյություն ունեցող տեսակետները՝ համեմատելով դրանք և փաստարկելով դրանց համոզիչ կամ անհամոզիչ լինելը» (էջ 19): Ատենախոսն իրավացիորեն համարում է, թե Նեմեսիոսը «հավաքաբան փիլիսոփա է, և նրա երկը հանրագիտարանային բնույթի ստեղծագործություն է» (էջ 22): Ատենախոսության մեջ ոչ պատահականորեն սկզբունքային կարևորություն է տրված «Մարդու բնության մասին» երկի, որպես վաղբրիստոնեական շրջանից մեզ ավանդված հոգեբնախոսական ձեռնարկի, բնությանը: Եկեղեցու հայրերի ժառանգության մեջ տարբեր առիթներով կատարված հոգեբնախոսական հպանցիկ դիտումները Նեմեսիոսի երկում վերածվում են մասնագիտական խորաքննիչ հետախուզումների, որոնք հիմնված են անտիկ շրջանի փիլիսոփայական-մարդաբանական աշխատությունների վրա: Բնականաբար Նեմեսիոսի համար մասնավոր ուսումնասիրության նյութ է դարձել մարդկային բնության գործարենական կենտրոնը հանդիսացող հոգին, նրա բնույթը, տարբեր գործառույթները: Ատենախոսը վերհանում է այն աղբյուրները (Արիստոտել, Գալենոս), որոնց հիման վրա Նեմեսիոսն իրականացնում է իր դիտումները: Նեմեսիոսի մարդկային հոգու մասին ուսմունքը և այդ առիթով նրա իմացաբանական ընկալումները լուսաբանելիս, ինչպես և վայել է պատմաքննական ուսումնասիրություններին, հետազոտողը նախ դասակարգում է երևույթը և հետո ծանրանում դասակարգված երևույթներից յուրաքանչյուրի վրա: Հետևելով Նեմեսիոսի դասակարգման տրամաբանությանը՝ նա գատորոշում է փիլիսոփաների երկու խմբեր, որոնցից մեկը հոգին համարում է մարմին, իսկ մյուսը՝ անմարմին գոյ: Մի առ մի ներկայացվում են այդ խմբերից յուրաքանչյուրի համոզումները և Նեմեսիոսի վերաբերմունքը նրանց նկատմամբ: Ատենախոսության այս բաժինն (1.4) աչքի է ընկնում փաստական նյութի բժախնդիր հաշվառմամբ, և դրանից օրինաչափորեն բխող ընդհանրացումներով, որոնք օգնում են ճիշտ գնահատել Նեմեսիոսի դիրքորոշումը, նրա ակներև հակվածությունը Պլատոնի, Արիստոտելի, Գալենոսի և Պլոտինոսի հոգու վերաբերյալ ուսմունքի նկատմամբ: Ատենախոսը հարկ է համարում մասնավոր անդրադարձով վերլուծել կամքի ազատության վերաբերյալ Նեմեսիոսի անվերապահ դրական վերաբերմունքը (էջ 75-80), որն, ի դեպ համապատասխանում է Հայ եկեղեցու վարդապետությանը, և կարող էր նրա հայերեն թարգմանության գլխավոր պատճառներից մեկը լինել:

Ատենախոսության Երկրորդ գլուխն ունի գերազանցապես հայագիտական ուղղվածություն: Այստեղ հանգամանորեն ներկայացված են «Բնության մասին» երկի հայերեն թարգմանությունը և դրա լուծմունքները, ուսումնասիրված է այն ազդեցությունը, որ այդ երկն ունեցել է հայ միջնադարի մտածողների ըմբռնումների վրա, տրված այդ աշխատության հայերեն թարգմանության մեջ ներկա ուսումնագիտական եզրերի վերլուծությունը: Այս գլխի առաջի ենթաբաժնում խոսվում է «Բնության մասին» երկասիրության հայերեն թարգմանության ժամանակի մասին, որ



վերահաստատվում է հայագիտության մեջ գերակշռող կարծիքն ինչպես ժամանակի (716/717թթ.), այնպես էլ թարգմանչի ինքնության (Ստեփանոս Սյունեցի) վերաբերյալ: Միջնադարի հայ աստվածաբանական մտքի մեջ Նեմեսիոսի երկի ընկալման առանձնահատկությունների մասին առարկայական պատկերացում տալու նպատակով առենախոսության մեջ ներկայացված է առավել ուշագրավ լուծմունքների մի խումբ (էջ 93-138), որոնց քննությունը բացորոշ հստակությամբ ցույց է տալիս, թե Նեմեսիոսի երկը ինչ լայն ընդունելության է արժանացել հայ իրականության մեջ: Այս ավելի լավ մատնացույց անելու նպատակով առենախոսության հեղինակը լուծմունքների յուրաքանչյուր խումբ օժտում է ամփոփ ներածականով, ուր լուսաբանված են հայ մեկնիչ հայրերի բացատրությունները:

Մասնագիտական նրբատեսությամբ են վերլուծված տեսական-փիլիսոփայական եզրերը, որոնք առկա են Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկի հայերեն թարգմանության մեջ: Առենախոսը հաճախ թափանցում է եզրի բոլոր հնարավոր նրբիմաստային տարբերակների մեջ, բացահայտում դրանց բովանդակային առանձնահատկությունները, վերհանում տարբեր իրավիճակներում դրանց կիրառման որոշակի օրինաչափությունները: Մոսիկյանն իրավացիորեն նկատում է, որ Նեմեսիոսի երկասիրության մեջ բացակայում է գեթ մեկ փոխառյալ փիլիսոփայական եզր, ինչը պայմանավորված է այն իրողությամբ, որ նախքան հելլենաբան թարգմանությունները «հայերն արդեն ունեին բավականաչափ կազմակերպված և տարածված գիտական եզրեր...» (էջ 165):

Առենախոսությունը ցավոք ազատ չէ որոշ թերություններից, որոնք տվյալ դեպքում չունեն մասնագիտական բնույթ:

ա) Այսպես, Նեմեսիոսի երկից բերված վաղագույն վկայություն է համարվում այն քաղվածքը, որ առկա է Ջ դարի հեղինակ Պետրոս Սյունեցուն վերագրված «Հարցմունք յաղագս մարմնաւորութեան Տեառն զանազանք...» երկում (էջ 140): Մինչդեռ այդ քաղվածքը, ինչպես փաստված է, բառացիորեն համապատասխանում է Ստեփանոս Սյունեցու կատարած թարգմանությանը (716/717թթ.): Սա նշանակում է, որ, ինչպես նկատում է Գ. Տեր-Մկրտչյանը, Պետրոս Սյունեցու անունով երկն իրապես շարադրվել է ոչ թե Ջ, այլ Ը-Ժ դդ. հայ – աղվանական դավանաբանական վեճերի շրջանում, Նեմեսիոսի երկի հայերեն թարգմանությունից հետո:

բ) Առենախոսի տեսադաշտից դուրս են մնացել Նեմեսիոսի երկից բերված բառացի և իմաստային բազմաթիվ վկայությունները, որոնք առկա են ԺԱ դարի հեղինակ Անանիա Սանահնեցու «Հակաճառության», ԺԳ-ԺԴ դդ. մեծանուն մատենագիրներ Եսայի Նչեցու և Տիրատուր Կիլիկեցու ժառանգության մեջ:

գ) Առենախոսը զարմանում է Նեմեսիոսի երկի լուծմունքի մեջ առկա այն մտածումի վրա, թե մարդը «կարգադրում է » դներին (էջ 95): Մինչդեռ դա ոչ այլ ինչ է քան արձագանքը այն փաստի, որ արդեն վաղ միջնադարից եկեղեցին օրինակարգել է դիվահալածության կամ երդմնեցուցության կանոնը, որ տեղ է գտել «Մաշտոց» ծիսամատյանում հետևյալ խորագրերով «Կանոն վասն այսահարաց...», «Կանոն վասն

երդմնահարաց» (տե՛ս Մաշտոց, Երուսաղեմ, 1901, էջ 190, Մայր Մաշտոց, Կ. Պոլիս, 1807, էջ 45):

դ) Լուկ թյուր ձևակերպման հետևանք է «Գրիգոր Տաթևացին իր Գիրք քարոզութեան, որ կոչի Չմեռան հատոր» երկում...» (էջ 159) տեղեկանքը. Սա այլ բան չէ. քան Տաթևացու ձմռանը խոսած քարոզների ժողովածուն, որ այդպես է անվանվել ժողովածուն կազմող Տաթևացու աշակերտ Հակոբ Ղրիմեցու կողմից:

ե) Իբրև արտաքին բնույթի դիտարկում նկատենք, որ հղումների դեպքում ավելի պատշաճ է «տե՛ս» հրահանգը կիրառել միայն միջնորդ գրականությունը մատնացուցելիս (տե՛ս օրինակ էջ 34), կամ նման դեպքերում առավել նախընտրելի է «հղումն ըստ» ձևը:

Կ. Մոսիկյանի «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա» թեկնածուական ատենախոսությունն արտացոլված է սեղմագրում, իսկ հեղինակի հրատարակած գիտական հոդվածները ներկայացված են ատենախոսության մեջ:

Հիմնվելով վերոբերյալի վրա՝ արձանագրելի է, թե կատարված աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ Կարինե Արտուշի Մոսիկյանն արժանի է իր հայցած փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին, որի համար միջնորդում եմ Երևանի Պետական Համալսարանում գործող ԲՈԿ-ի մասնագիտացված խորհրդի առջև:

Պաշտոնական ընդդիմախոս  
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր  
Մաշտոցի անվ. Մատենադարանի ավագ գիտաշխատող  
Ն. Ն. Քյոսեյան

Տե՛ս Երևանի Պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի պրոֆեսոր Ն. Քյոսեյանի  
արտաստորագրությունը

Տե՛ս Երևանի Պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի պրոֆեսոր Ն. Քյոսեյանի  
գծալի փոխգրչությունը

09.09.2023թ.